Երկրորդ հաղորդում

Աստվածային և առեղծվածային ոլորտը

Գրվածքների ընթերցում. Հվի 14:10-11, 16-20, Ա Կրթ 15:45բ,
Բ Կրթ 3:17-18, 13:14, Գղտ 3:14

I. Տիրոջ վերականգնման մեջ բոլոր սրբերին հարկավոր է հստակ հայացք՝ տեսություն, ֆիզիկական ոլորտի և աստվածային ու առեղծվածային ոլորտի վերաբերյալ՝ Առկ 29:18ա, Գրծ 26:19.

Ա. Մենք պետք է գնահատենք աստվածային և առեղծվածային ոլորտը՝ տպավորվելով հետևյալ սուր հակադրությամբ. երկրայինը՝ հակառակ երկնայինի, իրավականը՝ հակառակ օրգանականի, օբյեկտիվը՝ հակառակ սուբյեկտիվի, ֆիզիկականը՝ հակառակ առեղծվածայինի՝ Հռմ 5:10, Եբր 8:1:

Բ. Մենք պետք է մտնենք մի ոլորտ, շրջան, թագավորություն, որը շատ ավելի բարձր է այն ոլորտից, որում հիմա գտնվում ենք. այդ ավելի բարձր ոլորտը աստվածային և առեղծվածային ոլորտն է:

Գ. Մենք աստվածային և առեղծվածային ոլորտ մտնում ենք՝ տեսնելով այդ ոլորտը. հոգևոր բաներում տեսնելը մտնելն է՝ Հվի 3:3, 5:

II. Եռամեկ Աստված Ինքն է աստվածային և առեղծվածային ոլորտը՝ 14:10-11.

Ա. Եռամեկ Աստված՝ Աստվածային Երրորդության երեքը, ինքնագո, մշտագո, փոխգոյակցող ու փոխներկա է, ուստի և Հայրը, Որդին և Հոգին աստվածային և առեղծվածային ոլորտն են, որտեղ Աստվածային Երրորդության երեքը բնակվում են իրար մեջ՝ Մտթ 28:19, Բ Կրթ 13:14:

Բ. Հվի 14:10-11-րդ խոսքերի համաձայն՝ Որդին Հոր մեջ է, իսկ Հայրը՝ Որդու մեջ. սա ցույց է տալիս, որ Հայրը մարմնավորված է Որդու մեջ, իսկ Որդին Հոր մարմնավորումն է, ինչը ձևավորում է աստվածային և առեղծվածային ոլորտ՝ Եռամեկ Աստծու ոլորտը:

III. Աստվածային և առեղծվածային ոլորտը, որի մեջ մենք այսօր կարող ենք մտնել և որում կարող ենք ապրել, իրականում ոչ թե սոսկ Եռամեկ Աստծու աստվածային ու առեղծվածային ոլորտն է, այլ ավարտունացած Հոգու և պնևմատիկ Քրիստոսի աստվածային և առեղծվածային ոլորտը՝ Փլպ 1:19, Հռմ 8:9, Բ Կրթ 3:17-18, Գղտ 3:14.

Ա. Աստվածաշունչը բացահայտում է, որ Հոգին դարձել է ավարտունացած, համաբովանդակ և բաղադրյալ Հոգի՝ Հվի 7:39, 14:16-17, 20:22, Հռմ 8:9, Փլպ 1:19.

1. «Ավարտունացած Հոգի» եզրույթը ենթադրում է, որ Հոգին գործընթաց է անցել ու արդյունքում ավարտունացած Հոգի է դարձել՝ Հվի 7:39:
2. Ավարտունացած Հոգին բաղադրյալ Հոգին է, որի նախատիպը օծության յուղն է՝ Ելց 30:23-25.

ա. Քրիստոսի հարության մեջ Աստծու Հոգին միաձուլվեց Քրիստոսի մարդկայնության, Նրա մահվան ու դրա արդյունավետության և Նրա հարության ու դրա զորության հետ՝ Փլպ 3:10:

բ. Այս միաձուլման արդյունքը բաղադրյալ, ավարտունացած Հոգին է՝ 1:19:

3. Ավարտունացած Հոգին Եռամեկ Աստված է, ով Քրիստոսի մեջ անցավ մարմնացման, մարդկային ապրելակերպի, խաչելության և հարության գործընթացով՝ Հվի 7:39:

Բ. Աստվածաշունչը բացահայտում է, որ Քրիստոսը դարձել է պնևմատիկ Քրիստոս՝ Ա Կրթ 15:45բ.

1. Իր մահվան ու հարության միջոցով Քրիստոսը դարձավ կենդանարար Հոգի, ուստի և պնևմատիկ Քրիստոս՝ խ. 45բ, Բ Կրթ 3:17-18:

2. Այսպիսով՝ կարող ենք խոսել ավարտունացած Հոգու և այդ պնևմատիկ Քրիստոսի աստվածային և առեղծվածային ոլորտի մասին՝ Հվի 7:39, Գղտ 3:14, Ա Կրթ 15:45բ:

IV. Մեր փորձառության մեջ մենք փաստացիորեն դառնում ենք ավարտունացած Հոգու և պնևմատիկ Քրիստոսի աստվածային և առեղծվածային ոլորտի մասը՝ Հվի 14:16-20, 17:21-23.

Ա. Մենք այս աստվածային և առեղծվածային ոլորտի մաս ենք դառնում աստվածային ծննդի միջոցով. վերածննդի միջոցով մենք ծնվելով մտել ենք աստվածային և առեղծվածային ոլորտ՝ 3:5-6:

Բ. Մենք աստվածային և առեղծվածային ոլորտի մասն ենք դառնում՝ մասնակցելով Աստծու կյանքին (խ. 15), բնությանը (Եփս 1:4, Բ Պտ 1:4), մտքին (Եփս 4:23, Փլպ 2:5), էությանը (Բ Կրթ 3:18բ, Եփս 3:8), պատկերին (Բ Կրթ 3:18ա, Հռմ 8:29), փառքին (խ. 30, Եբր 2:10), որդիությանը (Եփս 1:5, Հռմ 8:23), դրսևորմանը (խ. 19) և նմանությանը (Ա Հվի 3:2):

Գ. Մենք աստվածային և առեղծվածային ոլորտի մաս ենք դառնում՝ կառուցվելով Քրիստոսի Մարմնում՝ Եփս 4:16.

1. Քրիստոսի Մարմինը աստվածային և առեղծվածային ոլորտ է, և որքան շատ ենք լինում Քրիստոսի Մարմնի իրականության մեջ, այնքան շատ ենք լինում աստվածային և առեղծվածային ոլորտում՝ Հռմ 12:4-5, Ա Կրթ 12:12-13, 27, Եփս 1:22-23, 4:16:

2. Հավատացյալները միախառնվում են՝ մեկ ամբողջություն դառնալով, որպեսզի լինեն Քրիստոսի առեղծվածային Մարմինը՝ Ա Կրթ 12:24, 27:

V. Որպես Քրիստոսին հավատացողներ՝ Աստծու զավակներ, մենք պետք է ապրենք աստվածային և առեղծվածային ոլորտում՝ Հռմ 8:16, Հվի 14:2-3, 20, Ա Կրթ 15:45բ, Գղտ 3:14, Բ Կրթ 3:17-18.

Ա. Աստվածային և առեղծվածային ոլորտը, որի մեջ մենք կարող ենք մտնել և որում կարող ենք ապրել, ավարտունացած Հոգու և պնևմատիկ Քրիստոսի աստվածային և առեղծվածային ոլորտն է. մենք պետք է սո-

վորենք ապրել այս հրաշալի ոլորտում՝ Փլպ 1:19, Բ Կրթ 13:14, Գղտ 3:14:

Բ. Աստվածային և առեղծվածային ոլորտում ստանում ենք Հոգուն՝ որպես եզակի, համաբովանդակ օրհնության՝ խխ. 2, 5:

Գ. Աստվածային և առեղծվածային ոլորտում ստանում ենք համբարձված Քրիստոսի փոխանցումն ու Նրա երկնային սպասավորության մատակարարումը՝ Եփս 1:22, Եբր 8:1-2:

Դ. Աստվածային և առեղծվածային ոլորտում փորձառաբար ապրում ենք Աստծու օրգանական փրկությունը՝ Հռմ 5:10:

Ե. Աստվածային և առեղծվածային ոլորտում ապրում ենք Աստծու թագավորության մեջ՝ որպես աստվածային կենսաբանական տեսակի ոլորտում՝ Հվի 3:3, 5:

Զ. Աստվածային և առեղծվածային ոլորտում ապրում ենք աստվածային կյանքի հաղորդակցության մեջ՝ Ա Հվի 1:3, 7, Գրծ 2:42:

Է. Աստվածային և առեղծվածային ոլորտում ապրում ենք ինքնաբերական և անջանք քրիստոնեական կյանքով՝ կյանքի օրենքի ինքնաշխատ գործառույթի համաձայն՝ Հռմ 8:2:

Ը. Աստվածային և առեղծվածային ոլորտում ապրում ենք ճշմարտացիության՝ որպես բացահայտված աստվածային իրականության արտահայտության կյանքով՝ Բ Հվի 1, Գ Հվի 1, Հվի 4:23-24:

Թ. Աստվածային և առեղծվածային ոլորտում մենք միաձուլվում ենք պատրաստված Եռամեկ Աստծու հետ՝ միասնությունը պահպանելու համար՝ 17:21, 23.

1. Իրական միասնությունը Եռամեկ Աստծու մեջ է՝ Մտթ 28:19, Հվի 17:21, 23:
2. Իսկական միասնությունը հավատացյալների միաձուլվելն է Եռամեկ Աստծու հետ՝ Բ Կրթ 13:14.
   ա. Այսպիսի միասնությունն ունենալու համար հավատացյալները պետք է լինեն ավարտունացած Հոգու և պնևմատիկ Քրիստոսի մեջ՝ որպես աստվածային և առեղծվածային ոլորտում:
   բ. Հավատացյալները մեկ են Եռամեկ Աստծու հետ ավարտունացած Հոգու և պնևմատիկ Քրիստոսի աստվածային և առեղծվածային ոլորտում:

VI. Յուրաքանչյուր հավատացյալ պետք է ապրի աստվածային և առեղծվածային ոլորտում և լինի աստվածային ու առեղծվածային անձ, այսինքն՝ մեկը, ով մարդկային է, բայց և ապրում է աստվածայնորեն՝ Գղտ 2:20, Բ Կրթ 10:1, 13:14.

Ա. Մենք պետք է լինենք աստվածային, բայց և մարդկային՝ ոչ թե սոսկ մարդկային, այլ առեղծվածայնորեն մարդկային. մեր ապրելակերպում ամեն ինչ պետք է լինի աստվածային և առեղծվածային՝ Հվի 14:16-20:

Բ. Աստվածային լինել նշանակում է ամեն ինչ անել Աստծու հետ, Աստծու մեջ, Աստծու շնորհիվ և Աստծու միջոցով՝ Ա Կրթ 10:31, Կղս 3:17:

Գ. Ինչպես և Տեր Հիսուսը, մենք պետք է լինենք մարդիկ, որոնք առաջին հայացքից ֆիզիկական են, բայց և անտեսանելիորեն աստվածային ու առեղծվածային և որոնք միաժամանակ ապրում են ֆիզիկական ոլորտում և աստվածային ու առեղծվածային ոլորտում՝ Հվի 3:13, Եփս 4:20-21, Եբր 4:16, 13:13:

VII. «Այդ ժամանակ երկու տղամարդ դաշտում են լինելու. մեկը վերցվելու է, իսկ մեկը՝ թողնվելու: Երկու կին աղացում աղալիս են լինելու. մեկը վերցվելու է, իսկ մեկը՝ թողնվելու»՝ Մտթ 24:40-41.

Ա. Երկու տղամարդն ու երկու կինը ներկայացնում են կենդանի հավատացյալներին Տիրոջ երկրորդ գալստյան ժամանակ՝ Հյտ 14:1, 4բ:

Բ. Վերցվելը մեծ նեղությունից առաջ հափշտակվելն է՝ Մտթ 24:21, Հյտ 3:10.

1. Մտթ 24:40-41-ը վերաբերում է գաղտնի հափշտակությանը՝ պատրաստների հափշտակությանը, հասունների հափշտակությանը՝ Հյտ 14:4բ:
2. Վերցվողների և թողնվողների միջև տարբերությունը կյանքի հասունությունն է. մեկն ապրում է աստվածային և առեղծվածային ոլորտում, իսկ մյուսը՝ ոչ՝ Մտթ 24:40-41:

Գ. Մտթ 24:40-42-ում Տիրոջ ասածը ցույց է տալիս, որ երբ մենք սպասում ենք Նրա գալստյանը և հույս ունենք հափշտակվելու, պետք է հավատարմորեն կատարենք մեր ամենօրյա պարտականությունները՝ ապրելով պատշաճորեն հավասարակշռված մարդկային կյանքով և միաժամանակ ապրելով ավարտունացած Հոգու և պնևմատիկ Քրիստոսի աստվածային և առեղծվածային ոլորտում՝ հմմտ Բ Թսղ 3:6-15:

© 2023 Living Stream Ministry